Լրացուցիչ տեղեկություններ

SMS հաղորդագրություններ կարող եք ստանալ ինչպես Բանկի, այնպես էլ Ձեր նախաձեռնությամբ:
Բանկի նախաձեռնությամբ ուղարկվող SMS հաղորդագրություններ ուղարկվում են՝

- Բանկի ընթացիկ, նոր ծառայությունների պայմանների կամ սակագների, ինչպես նաև Բանկում անցկացվող ակցիաների վերաբերյալ,
- Բանկի՝ արտարժույթների փոխարժեքի վերաբերյալ,
- վարկերի և տոկոսների մարման ժամկետի վերաբերյալ,
- վարկային և դեբետային քարտերին վարկային գծի նվազագույն գումարի մարման ժամկետի վերաբերյալ,
- վարկի գծով ժամկետանցման վերաբերյալ,
- ավանդի ժամկետի ավարտի վերաբերյալ,
- քարտին վարկային գծի տրամադրման վերաբերյալ:

Ձեր նախաձեռնությամբ տեղեկություններ կարող եք ստանալ՝ SMS հարցում ուղարկելով

- տեղական բջջային օպերատորների հեռախոսահամարներից 27-00 կարճ համարին 0
- միջազգային բջջային օպերատորների հեռախոսահամարներից՝ +79037676087 համարին՝ հաղորդագրության տեքստում նշելով ստորև բերված համապատասխան կոդային բառը:

Կոդային բառ	Ծառայություն
BALI	Քարտի ընթացիկ հաշվեկշռի ստացում
HELP	Մատուցվող ծառայությունների ցանկի ստացում
CLIST	Լրացուցիչ քարտերի ցանկի ստացում
CSTAT	Քարտի կարգավիճակի ստուգում
USL	Քարտի արգելափակում՝ մուտքագրում STOPList-ում
USL ACTIVATE	Քարտի արգելափակում՝ ելքագրում STOPList-ից
MSTI	Քարտային հաշվով վերջին 7 գործարքների պարունակությամբ հակիրճ քաղվածքի ստացում
LANG en՝ անգլերեն **LANG ru՝ ռուսերեն** **LANG am՝ հայերեն**	Ստացվող SMS հաղորդագրությունների լեզվի փոփոխում

SMS հաղորդագրության նմուշ՝

Ձեր քարտի ընթացիկ մնացորդի ստուգման նպատակով ուղարկում եք SMS հաղորդագրություն 27-00 կամ +79037676087 կարճ համարին՝ տեքստում նշելով BALI բառը: Բանկն ի պատասխան Ձեզ կուղարկի պատասխան հաղորդագրություն հետևյալ տեքստով.
“Available balance for card 1 VISA CL *XXXX is: 12000.70 AMD. Credit limit: 0.00 AMD. Own amount: 12000.70”: